

Ս Ի Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՋԳԵՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ, ԳՐԸԳԻՏԸԿԸՆ

ԵՒ ՔԸԳԸՔԸԿԸՆ

---


ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՅԵՐՈՒՍԸԳԼԵՍ


Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1867





ԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ  
ԹԻՒ 3.



ՄԱՐՏ 31.  
1867.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՐԳԵՅԻՆ ԻՆՆԵՍԻՐԵԿԸՆ ԵՒ ԳՐԵԳԻՏԵԿԸՆ

Ի ԳԸՀԵԿԸԼՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԻՈՐԳԵՅ

ՆՈՐԸՆՏԻՐ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ուստի ոգիդ, դաս տաւանեալ, աւետաբեր սիրուն հրեշտակ.  
Բարձեալ ըզյոյս և զաւետիս, զիմես փութալ ուր ուրեք Հայք  
Խոր յանդաճմանքս համակեալ, խոհան ըզպէտս Ազգին իւրեանց:  
Պատմեա մեզ ծն, ոգիդ զուարթուն, զմնչ քս պատգամ՝ աւետաւոր,  
Սիթէ յանգ ե՛լ ՚ի կարեւոր ինչ պիտոյից Ազգին մերոյ  
Եւ փրկութեան տոհմին Հայկայ Է՛րջանկութեան՝ բերես խոտաւմն.  
— «Օ՛ իմ՝ աւետիքս յուսապատար, անդէն կրկնեաց զուարթուն աշխոյժ,  
Օ՛ իմ՝ աւետիքս յոյր սակս եկի քեզ պատմեցից, հէք Հայկազուն,  
Որ բերկրառիթ անշուշտ լիցի փռտացեցոյդ և ՚ի տիպիւմն:



Յառաւօտուց մինչ ՚ի Մատենաց ես ՚ի գաղաթն հանգչէի լուռ ,  
 Ի զնին կայի տխուր երբեմն ճոխ յաշխարհն Հայկաց ,  
 Յորմէ թախուր արդ գլտանի և՛ այրիացեալ կայ յուտարեկ .  
 Պատգամ յանկարծ Մատուածային ՚ի դաբիրաց արձակէր վճիռ ,  
 Թէ ըզփեսայ եկեղեցւոյն Հայաստանեայց ընտրեցի արդ ,  
 Օլորժանաւորն ըզգահակալ ՚ի Բիւթանեայ կոչեմ ՚ի Հայս ,  
 ՕԳԵՈՐԳԵՈՍ Լախիտպոս զարթուն հովիւն Պրուսացւոց ,  
 Ի պաշտօն ՀԱՅՐԱՊԵՏԻ հանուրց ազին թորգումական .  
 Որ եռանդուն իւր բնութեամբ յոյս արծարծէ ՚ի սիրտ համբուն ,  
 Օ՛ի է կարող գոլ օգտակար , ՚ւ ազնւական ՚ի պաշտաման :  
 Լհա ես զայս , ո՛ Հայկազուն , նօթձեմ քեզ բան երջանկաւիթ ։  
 — Օ՛ն դու հապա , հրեշտակ սիրուն , հրեշտակ բանբեր սիրատարած ,  
 Որ տեսողացն ըզքեզ գամ մի դու արծարծես ՚ի յոգին յոյս .  
 Օ՛ն բարձրացիր արդ ՚ի յեթեր մատուցանել այժմ առ ՚ի մէնջ  
 Ի Բարձրելոյն ՚ի յաթոռ սուրբ զ՚ի խոր սրբաէ ըզմեր աղերս .  
 Օ՛ խմատութեան իւրոյ ըզնորհս հեղուլ մաղթեմք ՚ի մեր ՚ի Հայր՝  
 Լու զօրավիգն և օգնական լինել նրմա ՚ի յերկար կեանս .  
 Բառնալ զգեղծումն բարուց կրօնից որ ըսպրդեալ մուծան ՚ի Հայս  
 Հետեւեւոլ անմրտաբար շաւղաց վատթար և մթմառայլ  
 Տկարամիտ զառածանայն այլոց ազգաց ամբարտաւան :  
 Վառեսցէ սա յոգիս հանուրց ըզհուր սիրոյ Մատուածական ,  
 Հրեշտակայիննս պատրաստել Լեկեղեցւոյ ըզպաշտօնեայս ,  
 Ի կրօնականս , ՚ւ ՚ի պիտանին քաղաքական կրթեալ խնամով .  
 Յոր աւարտեալ ըզլեհութեան իւրոյ ըզպարոս նըւիրականս ,  
 Տարցի պըսակ վըսեմ փառաց առաքինեացն յասպարիղի :  
 Որում և մէք ընդ Հայս ողջոյն սկընկալու մընամք յաւէտ ,  
 Լու զերկար կեանս մաղթեմք յերկնից Հօրնս մերոյ ՎԵՀԱՓԱՌԻ .  
 Օլորախութեան զառհաւատչեայս տալով հնչմամբ երգոց գողտրիկ ,  
 Կեցցէ , ձայնեմք , մերս ՎԵՀԱՓԱՌԻ ԳԵՈՐԳԵՈՍ Հայր Սրբազան .  
 Կեցցէ ԵԼԹՈՒ Լուսաւորչեան ԵԼՃԻԿԱԾԻՆ միշտ անստան ,  
 Գործովք վըսեմ և բարերար , յիշատակաց արժանաւոր .  
 Վանդակեալ ՚ի սրտնս մեր անջինջ յաւերժ պահեսցի անդ :  
 Լու անմուաց Հայրն ողջոյն զնորայն սիրով տացէ զանուն  
 Լու բերկրեացին որդիք ըզհարբ պար բոլորեալ ճոխ , անկարօտ ,  
 Սինչեւ ցեթեր բարձրացցի փառք և ՎԼԷՀ անուն ազգիս Հայոց :

1867 Փետրուար 21 :

Երեսնաշէմ :

Ի Երեւան Երանգաւոր Եպրոյն աշակերտաց :

ԱԼԵԿՍԱՆ ՍՐԵՊԵԱՆ ԿԵՅՎԵՏԻ



Առաջիկայ ծառս՝ որ յառանգաւ  
ւորաց դպրոցի սրբաբաշխութե  
հանդիսին օրը կարդացուեցաւ, ու  
բարակիր ակրացու Սանտէրը զրուցած  
է, և որովհետեւ ասիկայ վաղեմի աւ  
շակերտներէն է և ոչ արդի յառանգ  
գաւորաց դպրոցին, վասն որոց իւր  
ծառն ալ հոս առանձին հրատարակել  
արժան համարուած է Աւսումնական  
խորհրդոյս որոշմամբ: Իսկ յառանգ  
գաւորաց դպրոցի մի քանի յառաջա  
դէմ աշակերտաց խօսեցած ծառերը,  
ինչպէս նախորդ թուով ըսինք, զատ  
տեսարակով հրատարակուած է արդէն:

Ամենապատիւ Արքայան Պատրի  
արք Հայր, և Ասեմաշուք հանդիսա  
կան Տեաքք:

Ինականաբար մարդս իւր կենաց  
ընթացից մէջ հաճոյական իրաց ձը  
գում մը՝ հակամիտութիւն մը ունի.  
այս խոհուն էակը իւր գոյութեան աւ  
ռաջին քայլափոխէն սկսեալ, երբ կե  
նաց ըստ ողջունելով՝ կը սկսի շնչել  
իւր էութիւնը կենդանացնող քաղցր  
սիրքը, և զինքը շրջապատող բնու  
թեան գեղեցիկ և վաւեր առարկայնե  
րու ազդեցութենէն բնական հետաւ  
քրքրութեամբ մը իւր ուշը և մտաւ  
դրութիւնը անոնց վրայ կը յարէ, ու  
րով կը սկսի իւր խմցականութեան  
սահմանը ընդարձակել:

Այս կէտէն սկսեալ իւր տեսու  
թեան առջեւ կը ներկայանայ այն քաղցր  
կենսակցութիւնը, որ կ'անուանուի ըն  
կերական յարաբերութիւն, ուրկէ  
ետքը սովորութիւններու ու օրինակ  
ներու հետեւութեամբ միայն իւր քայ  
լերը կ'առնէ, ուր անկողար բաղձան  
քէնմիայն հրամայուելով՝ օգտակարին  
և անօգտակարին, տգեղին և գեղեցիկին  
կը յարի իւր հաճոյիցը հաւանութիւն:

Իւր այսպէս մտեալ կ'ընթանայ դէպ  
ի այն վիճք՝ ուր իր բարոյական կենաց  
թելին կը սրբաւնան անակնկալ թշուա  
ռութիւններ: Իսկ երբ լծորդուի աւ  
նոր ամեն մէկ աճեցուն շարժման հետ  
մտքի և սրտի դատարարակութիւնը,  
կը սկսի քայլ առնել առ բարին միայն և  
առ վայելուչն: Իւր այս հայեցողական  
կարծիքը ճշմարտիք՝ և թէ իւր սկիզբը  
մարդասիրութենէն չըլլայ, որոյ պա  
կասութեան վնասը ինչպէս շատ ազ  
գերու, նոյնպէս մեր ազգին վրայ ալ  
կը տեսնուի:

Այսօր ամեն մարդ համոզուած է  
թէ մարդս ընկերութեան մէջ կ'ապ  
րի, և թէ մարդկութեան անդամ և  
այն սեռին նոյնութեան առնչութեամբ  
ունեցած յարաբերութիւններով՝ պարտ  
քեր կոտորելու և իրաւունքներ վա  
յելելու տրամադրուած է. մէկ խօս  
քով՝ իբր աշխարհաբաղակցի, պար  
տաւոր է այն ընդհանուր մարդկու  
թեան, ուր կը տեսնէ իւր ամբողջու  
թիւնը կազմող ամեն ներգործութեան  
իրական պատկերը և իբր հայրենի  
քի զաւակ՝ պարտաւոր է նաեւ իւր  
հայրենեաց:

Այս պարտաւորութիւնները ան  
ծանօթ գաղափարներ չեն, ամեն նըր  
բատես միտք կ'ընայ առանձին իւր բը  
նութեան վրայ հետազօտել, և իւր  
կանուխ հասակին մէջ նշմարել զայն:  
Ար և իցէ՛ առարկայի նշանակիչ գաղա  
փար այնչափ ազդու և ախորժելի չը  
թրթռար մեր լսելեաց՝ որչափ մարդ  
և մարդկութիւն բառը, այս ախոր  
ժակը կ'ենթադրէ անոր լաւութեան  
իղծը: Արդկային սեռին բարեբաւու  
թեանը հաճութիւն և բաղձանք ու  
նենալը, հանրութեան բարւոյն վրայ  
նկատողութիւն ընելը, ոչ այլ ինչ է՝  
բայց եթէ մարդասիրութիւն: Արաին  
այն գեղեցիկ զգացումը, երբ կ'ըզա



նակաւորի և իր ծաւալը կ'ամփոփէ ,  
կըլլայ աղգասիրութիւն և հայրենա-  
սիրութիւն : Այս կոպտարին մէջ հա-  
մեմատաբար իր ուժը աւելցած կը  
տեսնենք , վասն զի ամեն ոք իւր կե-  
նաց շարունակութեան սկիզբը հան-  
տեսնելէն զատ՝ արմատացած կը դըռ-  
նէ հան նաեւ իր լեզուն , իր կրօնը ,  
և իր քաղաքային և ընկերական սովը-  
րութիւններն ու յարաբերութեան  
կերպը :

Բայց միթէ ներելի է միայն այս  
եռանդով վարուիլ , ոչ ապաքէն ա-  
մեն մէկ հաւաքական միութիւն , իրը  
անհատ ուրիշ որ և իցէ հաւաքական  
միութեան հետ իւր իրաւունքը վա-  
յելելու արդար պահանջումն ունի .  
ուրեմն անիրաւութիւն մը եղած չըլ-  
լար , երբ վիրաւորելով մարդասիրու-  
թիւնը , հայրենասիրութեան և ազ-  
գասիրութեան տարապայման կիրա-  
ռութեան մէջ կը գտնուիմք :

Այժմ սուր ակնարկ մը ձգենք դա-  
րերու և ժամանակներու շղթային վը-  
րայ , անոր ամեն մէկ օղակին հետ պի-  
տի ներկայանայ մեր աչքին հայրենա-  
սիրութեան անկախ ոգւոյն ռճիրները ,  
մարդասիրութեան խորտակուիլը , և  
ազգերու եղութեան և անձնասիրու-  
թեան աղետալի տեսարանը : Ի՞նչ սա-  
կալի և տխրադէմ պատկերներ չպիտի  
ներկայանան մեզի Տեաք , երբ ան-  
նենք հան անօրէնութեանց և բարբա-  
րոտութեանց տակ արդար օրէնքներու  
կտրակոր ընկձիլը , բարբար և մարդա-  
սէր անձանց բռնաւորներու և չարա-  
գործներու դժոխքմբեր ճիրաններու  
դոհուիլը , իրաւանց բռնաւարտիլը .  
որոնց ամենը իրը հայրենեաց սիրոյ ար-  
գիւնը ծուռ հայեցողութիւն մը դիւ-  
ցարկութեան երանաւէտ գործերնը  
կատուած են :

Անուանին Յունաստան՝ մինչդեռ

արագ քայլափոխներով իր միջօրէտիւ  
նին կը դիմէ , Ապարտայ մօլեալ ոգ-  
ւով՝ իւր տահմանները ընդարձակելու  
նպատակները կը յղանայ , և Աեօնիոյ  
բարեբեր դաշտերը զայն փայլելու ա-  
նարժան կենդանւոյ մը ձեռքէն յա-  
փըշտակելու մը պէս երկարատեւ պա-  
տերազմներով երկիրը իր բնակչաց ա-  
րեամբը կ'սղոյզէ : Կրկիւրացիները և  
Կրնթացիները արիւնիով լուսելն եա-  
քը՝ Յունաստանի տիրապետող Աթէն-  
քին վրայ իւր վրիժառու ոգին կը թա-  
փէ :

Պեղողանիական դաշնակցութիւ-  
նը կազմած՝ անդադար պատերազմնե-  
րով Յունաստանը կը գրդդէ . վասն զի  
հայրենեաց դիւցազուններ պիտի կազ-  
մէ , վասն զի մարդը՝ միայն իրենց հայ-  
րենի սահմանին մէջ տեսնել ուսած  
են : Այժմ ամեն հաւաքական միու-  
թիւն ճանչնար թէ իրենին պէս նը-  
ւիրական է ուրիշի մը սեպհականու-  
թիւնը , այսօր Ահաստան իր հինցած  
խարոսին վրայ թերեւս օգ պիտի շն-  
չէր , և Ժէ , դարը անոր հազարամեայ  
կենաց վրայ դարեր պիտի համբեր :  
Բայց մարդասիրութենէ զոկուած ազ-  
գասիրութեան օգին զայն կը գրդդէ ,  
ինչպէս այսօր ալ անոր կիսաշունչ մար-  
մինը տակաւին զօրաւոր բազկի մը  
մէջ հեղձամղձուկ կը ճմլուի . անկա-  
րեկիր սիրտ մը չահաբեկելով քաղա-  
քականութեան դատարնութենէն ա-  
նոր արեան կաթիլներովը կը զովանայ :  
Ազգաց իրարու գէմ թշնամութիւնը ,  
Տեաք , Դեկզանէ անտի անդնդա-  
խոր սոսկալի տաքտարունելու մէջ գա-  
հալիւմած է մարդկութիւն , ընդհանու-  
րին օգուտը չմտածելով՝ իրենց մէկ  
անարգ փառասիրութեանը և չահա-  
մօքնութեանը համար կ'անտեսեն մար-  
դասիրութիւնը , և գաղանային անդուտդ  
կրկիւ մտնուած՝ իրենց համարեւ ըն-



կերները սրայ տակ կը տապալեն , թափելով այն արիւնը՝ որ իրենց երակներուն մէջ խակ կը կրեն . այն արիւնը՝ որ պէտք էին յարգել բարերարութեամբ : Ասոր մը հողի , փաշիլուն մետաղի և սին փառքի մը համար կը զիջանին անարգել զայն , կը զիջանին մինչեւ անգամ հանրութիւն մը , ազգութիւն մը բնաջինջ ընելու :

Ապրիլի թան երկարատեւ պատերազմներէ տկարացած՝ երբ Հռոմի յաղթական դրօշին տակ յերկուս ծըւէնս բաժնուած գլուխ կը խանարհեցնէ , հարկ կ'ըլլայ նաեւ անոնց կարգադրութեան հնազանդիլ : Բայց տիրապետող առնութեան ուղին Սափնիտայ Հռոմայեցւոյ նիդակաղիին սրտին մէջ մեծանալով՝ Ապրիլի զաշնակից Սիփակսի թագաւորին կիսով չափ ձեռքը մնացած խորտակեալ զօրութիւնն ալ գրաւել կը ճգնի :

Ապրիլի Հռոմայի ծերակայտին կը բողբոքէ , իսկ Հռոմ այս արդար բողբոքին ուկնախից ըլլալէն ՚ի դատ իր ազահովութեան համար Աստուծոյ առննարանութեամբը թշուառ Արիւն թոնը հիմնացատակ կործանելու կը պատրաստուի , և իրեն աստուածներու զոհ՝ քաղաքին յոտակը արեան հեղեղներով կ'որոգէ . հարստութիւնը կը գրաւէ , և անտարտ դարձուցած՝ կը ջնջէ երկրի երեսէն Ապրիլի թան անունը և ազգը :

Եւ յայդէս նաեւ շատ ազգեր , ուրիշ ազգի մը դիւցազուններուն կրից զոհ եղած , պատմութեանց էջերուն մէջ միայն իրենց անունը կը կարդացուի , ինչպէս են Վրաց , Սարաց , Ասորաց , Փիւնիկեցւոյ , Եսաւացւոյ , Սիւլթացւոյ եւայլն ազգերը : Եւ ամենը թիւր հայեցողութեան մը աղէտարեր հետեւանքներն են . այն որ վայրենութիւնը արհամարհելի

ըրած է , նոյնը կրթիչ ոճիրներու տակ ձգելով շատ անգամ դից և կրօնի շահատակներ շինած է :

Տեարբ , բիշ մ'ալ դէպ Հայաստանի հորիզոնը սլանալով մեր նախահարց շիրիմներուն վրայ յառենք մեր ուշը , ուր իրենց սաւառնող ոգին , առնէ ժամ մէն մի անցորդին իրենց դործոցը վրայ տեղեկութիւններ կը հաղորդէ : Հոն պիտի տեսնենք աշխարհաշէն Հայկ մը իր յաղթական բազկին տակ Աստուծոյ և մարդկութեան թշնամի հակայ մը տապալած , իրաւանց բարկութիւնը կը դործագրէ : Տիրան նենգութիւնները յանդիմանելով՝ ազգերու անիրաւութիւնները կը պատժէ , և հայրենիքը կը պաշտպանէ :

Այլեւն աղաւնոյն նման մարդկութեան երկու ճշմարիտ նահատակներ խաղաղութեան և լուսոյ ձիթենւոյն շիւղը բերնբերնին Հայաստանի ամեն կողմը թռչտելով՝ առաւօտել կը ճրգնին խոհական իշխանի մը ձեռնտութեամբ :

Վերջապէս պիտի տեսնենք տղւմուտի և Եւսոբոյրի սրտաբեկ տեսարան , հոն՝ անցնորդ մը ով որ ալ ըլլայ՝ եթէ պատմութեանց տեղեկութիւն աւնի , եթէ ազգայ իրաւունքը կը ճանաչէ , և եթէ մարդասիրութեան գգայմունքը կը կրէ իր պատին մէջ , անկարելի է որ վայրիկ մը առանց կանկաւնելու շարունակէ իւր քայլերը և առանց սրտաճմլիկ հառաչելու՝ իւր ուշքը իր շուրջը յածէ լրջմտութեամբ : Հոն պիտի տեսնէ անձնանուէր դիւցազանց քաջամարտիկ խուճերը , որ Եստուածային և Վրացի սիրովը զբաղատալով՝ հայր սրբւոյն և որդին հօրը , եղբայրը եղբօրը ընտանեկան աշուղ սերը անտեսելով , հարուստը և աղնուտկանը իրենց տակ ձեղուն ապա-



րանները ամացութէ մատնած՝ մարդ-  
կութեան իրաւունքը առ հասարակ ա-  
մեն սրտի մէջ ակոյցեան՝ նահատակու-  
թեան ատորարէղ կը կարդան :

Վամիկոնեան զուակը գիւցազուն  
մարտիրոսաց խրատայներ գոչելով՝ բո-  
ցակէզ սրտէն անխաճան կենաց վը-  
տակներ կը յորդէ . հոն գիւցազնա-  
մու սեւաւոռնի երամին Վարուշանաց  
պաշտօնէից սուսերամերկ բազկին տակ  
վարդապոյն արեան մէջ լողալով՝ յա-  
ւիտենականութեան նաւահանգիստը  
կը թռչնէ : Վյոպէս ահա կը գացուի  
տեառանք , ուրկէ ետքն Հայաստանի  
լուռ ու ակաւոր աւերակներուն մէջ  
կը գտնեմք զմեզ : Այլ փղծկին մեր սրը-  
տերը միայն անջինջ մնալով այն գիւ-  
ցազանց յիշատակները , որ հանրու-  
թեան օգտին համար նահատակուե-  
ցան մարդասիրութեան թշնամի անի-  
րաւ բռնաւորներէ :

Չմոռնա՛ք Տեառք , թող մեր աչ-  
քը չզջատի միայն բարւոյն կողմը՝ նը-  
կատելով , ունեցած ենք շատ անգամ  
անոր տգեղ կողմերն ալ . պէտք է խու-  
տոփանինք՝ թէ Հայաստան ալ սնու-  
ցած է յոռի զաւակներ , մարդկու-  
թեան կեանքը առ ոչինչ սեպող աչ-  
խարհակալ գիւցազուններ , և որ ա-  
տելի գէշն է , Վտակներ , Վեհրու-  
ժաններ , մոտանիչներ , որոնք աւելի  
առիթ տուած են Հայաստանի նոր  
ծաղող և դեռ ճառագայթող արեւը  
մարելու , անոր կեանքը նահատակե-  
լու և փառքը նսեմացնելու . որոյ  
կենդանութիւնը և փրկութիւնը մար-  
դասիրութեան հրաշագործ ոգւոյն զօ-  
րաւոր ներգործութենէն միայն կրնայ  
սպասուիլ :

Եւ Հայաստան այսպէս թէ՛ ներ-  
քին և թէ՛ արտաքին թշնամիներէ  
շատ անգամ հարուած կրելով իւր բռ-  
լոր արտաքին պերճութիւններուն հետ

անշքացաւ ներքին բարօրութիւնն ալ  
և խոր ավրութեամբ մը մշտնջենաւոր  
թշուառութեան վիհը գլորեւու կէ-  
տը հասաւ Հայ ազգը :

Սակայն Վախտիսնամութիւնը բո-  
լորակն չանտեսեց զայն : Հայը յու-  
սահասութեան շղթաներու տակ պի-  
տի չընկճի՝ և թէ ճանաչէ իւր պարտ-  
քը , և թէ մարի և սրտի դատախարա-  
կութեան հոգ տանի , անշուշտ պիտի  
վերանորոգուի իւր բազդը , և բար-  
ւորելով իւր վիճակը յանգորդ տպա-  
գայ մը պիտի պատրաստէ իւր սե-  
րնիկոյր :

Աւրեմն , ո՛ր Տեառք , ճանչնալով թէ  
ինչ է մարդ ու մարդկութիւնը , ապ-  
է ազգութիւնը , և այս նախնական  
սրտառուց կատարման մէջ թերի չը  
գտնուելու համար՝ մեր սրտին կը թու-  
թիւնը մարդասիրութեան կենսական  
տարրով բազադրեմք , որով մարդս  
ճշմարտապէս կը գիւցազնանայ , վասն  
զի նոյն իսկ մեր Վարդին ալ կամքն է  
մարդասիրութիւն , և որով օր աւուր  
դէպ ՚ի յառաջ քայլեր ընելով կարող  
ըլլամք լուսաւարեալ ազգաց շրջանին  
մէջ մանալ և Հայ անունը անմահա-  
ցրնել :

Հուսկ ապա վերջացնելով խօսքս՝  
խնդրեմ , բարեխնամ Սրբազան Հայր ,  
ընդունել մեր դուրնաբեայ երկը , և  
օրհնել զմեզ Ձեր Հայրական քաղցր  
օրհնութեամբ , որպէս զի մեք եւս ա-  
պագային մէջ ընդհանուր մարդկու-  
թեան և մեր սիրելի Վղլին օգտակար  
անհատներ ըլլամք :

1867 Փետրուար 23 :

ՄԱՆՈՒԿ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ  
ԹԻՒԿԵՅԻ



# ԿՐՕՆԵԼԿԵՆՔ

ՍԱՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ ԵՒ ԻԻՐ ԳԻՐՔԸ

(Հարանակութիւն, տես թիւ 2.)

## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԱԸ յ՛յյՆԷ՛ ԼԷ ՀԵՒՅ՝ ԽՅՐ Է՜՜ :

Տէր իմ, շատ զարմանալի կ'երեւի ինձ մեր բրածը, որովհետեւ այս գերութենէ ազատելու միշտ կը յուսամք, և միշտ ալ Արուստակէմ դառնալուս վրայ խօսք կ'ընեմք. ասոր համար կոչը եմք և սրբազամիտ մարդիկը կը խաբէմք: Վանդի յայտնի է՝ որ Տիտոս զմեզ ցիր ու ցան ընելէն յետոյ՝ մեր մէջ մարդարէ մի չերեւցաւ որ մեզ (հայրենիք) դառնալիս խոտանայ, և ոչ այլ եօթանասնամեայ գերութենէն ետքը մարդարէ մի գանձուեցաւ որ այս գերութեանս վրայ խօսի, որոյ վախճանը աշխարհիս վախճանին հետ է, և ազատութիւնը յաւիտենականութեան կատարածին հետ: Արովհետեւ Վանիէլ իններորդ գլխոյն մէջ այն գերութիւնը անվախճան կը կոչէ, վասն որոյ կը վախնամ, Տէր իմ, որ չըլլայ թէ Աստուած այս գերութիւնը մեր բոլոր ազգին վերայ մտաւ ուղերը ուրիշ բանի համար եղած չըլլայ, եթէ ոչ այնպիսի մեղաց համար՝ որ քան զմարդարէ սպաննելը և քան զկռաւորաշտութիւնը, որոնց համար մեր հարերը խրատուեցան, աւելի մեծ ըլլայ: Այլ վախնամ, կ'ըսեմ, որ ինչպէս Աստուած այս մեղաց մէջ մտանալու համար մեզ կենդանեացս չողորմիր, նոյնպէս մեր մէջէն մեռնողներուն ալ չպիտի ողորմի: Սակայն Աստուծոյ եմք ինչ գէտք այլ պատահելու ըլլայ:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԵՒՅ՝ ԼԷ՛ ՇԻՆԷՆԷ՛ Լ ԼԷ շԵՆԷ՛,  
Ի՞նչ ԴՆԵՐԵՅԷՆԷ՛ :

Տէր իմ, կ'երեւի թէ զուրիշներն այլ և զմեր անձինքը կը մտրեցնենք. որովհետեւ օրինաց և մարդարէից դուրքերուն մէջ շատ տեղ մեր ազգը ազատելու ու ցիրուցանութենէ ժողովելու խօսք կու տայ Աստուած: Ի՞նչ ու չադրութեամբ մտածողը յայտնի կը տեսնէ, որ բոլոր մեզ եղած խոտանունքները կսո՛ւ եօթանասնամեայ գերութենէն առաջ և կամ նոյն եօթանասուն տարուան միջոցին մէջ կա տարուեցան, և կամ թէ եղած խոտանունքներն այն մարդոց մեղացը համար էին, որոնց ամենեւին չներդրեցին խոտմունքները, զորոնք աւաւսիկ տէր իմ, քո առաջդ կը դնեմ: ( ) օրինակի համար, Աղեկիէլ մարդարէն սա կարճ խօսքերը կ'ըսէ. « Թէ որ իմ արդարութիւններս վեր առնելու ըլլաք, ու հրամաններս պահէք, կը ժողովեմ զձեզ երկրիս չորս ծայրերէն ու կը բարձրացնեմ զձեզ ու կը տանիմ զձեզ ծովով ու կը դարձնեմ զձեզ ձեր սուրբ տունը <sup>(1)</sup> »: Տես հիմայ որ Աղեկիէլի բերնով և այն խօսքերով մեզ Աստուծոյ խոտացածը՝ նոյն մարդարէին գրքին մէջ ուրիշ տեղուանք այլ <sup>(2)</sup> կը ցուցնէ, թէ աւանդ շատ անգամ կատարուեցան եօթանասուն տարիէն առաջ: Այլ ասոր նման Տիրոջ բրած խոտմունքները թէ մեծ և թէ փոքր, ուր որ կան սուրբ գրոց մէջ, ամենքն ալ մեր այս վերջին և անվախճան գերութեան մէջ իյնել:

(1) Եւ աւելց զձեզ ի հիթանոսաց, և ժողովեցից զձեզ յամենայն ազգաց, և տարայց զձեզ ի Երկին ձեր. ԳԼ. Լ. 24:

(2) ԳԼ. ԺԱ. 17: ԻԸ. 23: ԼԷ. 21:



նէս առաջ կատարուեցան , և այն գերութիւնն արդէն հազար տարին անցաւ , և մարդարեւից և ոչ մէկուն գրքին մէջ ասոր վախճանը կը գտնեմք . և ոչ խոստմունք մի ունիմք Վստուծոյ մէջ : Արովհետեւ ուր առաջ տուածեան և ժողովելու խօսք կ'ընէ , այս յաւիտեանական գերութիւնն աւմենեւին չիշէր , այլ միայն եօթանաստուէն տարիէն առաջ եղած ներդուծիւնները և ցիրուցանութիւնը . և ասոնցմէ ետքը՝ չխոստանալով կրկին զմեզ ժողովելու , ուստի առանց երկրացութեան՝ այն եօթանաստուէն տարիէն յետոյ մեծ մեղքը գործած եմք , որոյ համար զմեզ անվախճանօրէն կը խրատէ , և նոյն մեղաց մէջ ամենքնիս այլ կը գտնուիմք : Եթէ այսպէս չըլլար , Վստուծոյ կողմէր մեզ , և այսչափ հանրական բարկութիւն մի չէր գար մեր վրայ :

Վասն զի դրոց մէջ կը տեսնեմք որ ըսած եօթանաստուէնաց գերութենէս առաջ մեր հարերը որքան մեղք որ գործեցին , խրատուեցան . քանի մի օրինակները միայն յիշեմ շատերուն մէջէն : Ագիպտոսէն ելնող հարերնիս եօթանաստուէն տարիէն առաջ մեղանշեցին . և անոնց վերայ խոստմունքը չկատարեցաւ , այլ անուագատը իրենց մեղաց մէջ մեռան : Սոքալէս ինքն այլ հակառակութեան ջրին մասին մեղանշեց , ու աւետեաց երկիրը վայելելու չարժանացաւ : Վհարոն եւս մեղք գործեց ու խրատուեցաւ : Հեզի քահանայն այլ մեղանշեց , ու մէջքի ոտկորը կոտորուելով հոգին աւանդեց , և անոր ժառանգութիւնը քահանայութենէ զրկուեցաւ , թէ եւ Վստուծոյ յաւիտեան խոստացեր էր զայն :

Իսկ այսպիսի խոստմունքներու մասին սա մտածել պէտք է միշտ՝ թէ իրենց մեղաց համար անարժան չափով

ըլլային խոստմունքները վայելելու , ինչպէս յայտնի է Վաւթի թագաւորութենէն . վասն զի անոր մարմնոյ կողմանէ ժառանգութիւնը թագաւորութենէն զրկուեցաւ : Ինչպէս և ճշմարիտ վառաւոր Վստուծոյ Վրոհանու և անոր սերնդացը խօսք կուտայր որ այն երկրին յաւիտեան իշխեն , սակայն շատ անգամներ զրկեցան այն երկրէն իրենց մեղացը համար , և շատ անգամ Վստուծոյ նոյն երկիրը իրենց տուաւ մինչեւ այն վերջին անգամ , ուսկէց որ հազար տարիէն աւելի է զըրկուած եմք , և այլ յոյս չկայ կրկին ըստանալու զայն , անոր համար որ ամենքս այլ նոյն մեղաց մէջ մնացած եմք , և նոյն մեղաց համար մեր երկիրը կորուսինք :

Եւ շատ զարմանալի է , Տէր իմ , թէպէտ և ամենքս այլ համաձայն եմք ըսելով թէ Բաբելոնի եօթանաստուէնաց գերութենէն յետոյ Վստուծոյ գէմ խիստ մեծ մեղք մի գործեցինք , սակայն հարցնող մի չկայ՝ թէ այն խիստ մեծ մեղքը ո՞րն է , որոյ պատճառ այսքան մեծ չարեաց մէջ ինկած եմք : Եւ եթէ մեր մէջէն պատճառն ու մեղքը ճանչցող կայ , որոյ համար ինկած եմք այսքան մեծ թշուառութեան մէջ , սակայն նոյն պատճառն ու մեղքը իւր ընկերին յայտնող չկայ , և ոչ այլ պատճառն ու մեղքը գիտցողը կը ջանայ զիւր անձը ազատել անկէ , այլ ամենքս ալ ինկեր ու խռկեր եմք անոր մէջ : Եւ յայտնի կը տեսնեմք որ վերը ըսած եօթանաստուէնաց գերութեան ժամանակ Վստուծոյ մեր հարերուն հետն էր մարգարեից ձեռօք , որ էր Արեմիան եւ ուրիշները , և անոնց առաջնորդ տուաւ Սաղաթիէն ու դատաւորները և քահանաները , որոնց հետ երբ օրէնքները կարգացին ու սովաշարութիւնն լցաւ , հաշտուեցաւ Վստուծոյ հետերնին . երան Բաբելոնէն ,



չինեցին Արուսաղէմն ու Տաճարը եւ միւս քաղաքները, և Աստուած իւր ուղարմութիւնը աւատօրէն լեցուց աշունց վերայ: Բայց այս գերութեանս մէջ և ոչ մէկ մարգարէ մի ունիմք հետեւնիս, և ոչ իսկ Աստուած մեզ կ'եբեւի:

Արեւմտեան, Տէր իմ, քննեցի ուքննելէ չեմ դադարիր՝ թէ որն է այն մեծ մեղքը, որոյ համար հազար տարիէն աւելի է գերութեան մատնուած եմք: Չունիմք մարգարէ մի այլ, ոչ թագաւոր, ոչ քահանայ, ոչ սեղան, ոչ զոհ, ոչ օծումն, ոչ խաւով և ոչ քաւութիւն, այլ բոլոր աշխարհի առջեւ՝ ինչպէս և Աստուծոյ գիմացն աւելի ու արհաւիրահելի եղած եմք: Այլ մեր սրտին մէջ հպարտութիւնը կը թագաւորէ, որով մեր անձինքը քան զբոլոր աշխարհքը վեր կը դասեմք: Այլ այն նիւթիս մէջ, Տէր իմ, այն բանը որ պատշաճ կը համարիմ, քու դատողութեանը ներքեւ կը դնեմ: Այլ սակայն Աստուծոյ եմք՝ ինչ որ այլ հանդիպելու ըլլայ մեզ:

Ի յաջորդէն:

Պօլս Պատրիարքի Արքիեպիսկոպոսիցոյ  
Ռէյ արքեպիսկոպիտէն:

Հաւատոյ և կրօնից խնդիրը և նորա գէմ եղած վէճերը նոյն իսկ կրօնից հաստատութեանը չափ հին են: Ասիական գարուց մէջ երբ մարդկային մը տաց ուժն ու դատման կարողութիւնը նուազ էր որ և է ճշմարտութիւն մի ըմբռնելու համար, իսկ որոյ իրենց սիրտն ալ աւելի հակամէտ էր նիւթաւորչութեան, այսինքն այնպիսի գերագոյն էակ մի սրտելու՝ զոր կարենայ տեսնել և իւր զգացարանաց տակ ինքի, տակէ յառաջ եկաւ կուսակալութիւնը,

որ, յորում նոյն իսկ խորացելայիք խիստ շատ անգամ՝ կ'իյնէին թողալ՝ Ահհա, ինչ որ աներեւոյթ և ճշմարիտ Աստուածն էր իրենց և բոլոր անդերիս: Իսկ երբ քրիստոնէութիւնը իւր աստուածային կրօնին ուժովը մարդկային միտքը նիւթաւորչի նուաստ գողափարներէ դէպ խնցախան աշխարհն բարձրացոյց, յստակ ու կատարեալ գաղափարի մի վերածեց նորա միտքը, այն է՝ ճշմարիտ կրօնիւ օժեց նորա սիրտը: Յիսուսիւ Վրիստոսիւ, որոյ աւետարանին առաջը լեցին ամեն փիլիսոփայութիւնք: Յետ այնորիկ մարդիկ որքան որ նոյն աւետարանին լուսովը իրենց միջին տեսիլները թողուցին, նախապաշարմունքները մերկացան, այսու աւանդին առջեւ անհատ մի և նոյն տեսիլը չունեցան իրենց ընդունած աստուածեղէն կրօնին վերայ, ուսկէ հետեւեցան կարծեաց բաժանմունքներ, և տակէ ծագեցան կրօնական վէճերը, հերձուածներն և աւելութիւնն ընդդէմ իրենց եղբարցը, որք զմի և զնոյն հաւատքը ու զմի և զնոյն Վրիստոսը կը պաշտեն:

Այս բաւական չեղաւ. սկսան ի բարու համարումներն ալ բռնաբարել, խզել ազատութիւնը գերել, որուն տգիտութիւնն ու շահասիրութիւնն ալ օգնելով, մէկ կողմէն միւս կողմը, և անդրադարձօրէն հաստատմանը յաճախեցին, և Վրիստոսի եկեղեցւոյ փորձիւր ըմբռնարարիներու հրապարակ մի եղաւ, և Պետրոսի սուրբ պատեանէն ելնելով՝ սկսաւ փայլել անարարաւորութեան խզիլն վերայ: Հայտատանայցս սուրբ Արեւելիցին եւս՝ որ հերետիկոսական դարերուն մէջ ինքը միայն խաղաղութիւն կը փայլէր, իւր զաւկիները ամբողջ իւր ծոցին մէջ կը բերելով, եկաւ ժամանակ որ նա այլ հերձուածներու երեսէ սկսաւ վրդովել:



ընդունեց հարուած մի Հռոմէական եկեղեցիին երեսէն խարդողիմէսս անուն լատին միաթոնարի մի ձեռք , որ առաջինն եղաւ Հայաստան եկող : Ստացաւ նա քանի մի որսեր , փաքրոգի ու չլամիտ վարդապետներ և անոնց հետեւող տգէտ և միամիտ աշխարհականք : Եթէ սրբոյն Գրիգորի և սբն Ներսէսի աղօթքն օգնու թեան չհասնէին , կրնար այն փորձը մեծ կորուստներ պատճառել եւ Հայոց ազգութեան ոգւոյն փրկութիւնը մատնել : Նոյն դարուն մէջ յարոյց լատուած գերագոյն հանձար մի և ազգորական գրիչ մի , այն է Նայի վարդապետ նշեցին , ու վառվառն հոգի մի և ազգասիրութեամբ բորբոքուած սիրտ մի՝ այն է Գրիգոր մեծ հռետորն Տաթեւացի , Տիրատուր վարդապետ , Ստեփան վարդապետ երզնկացի և ուրիշ շատ մի հոգեւոր մը շակներ , որոնք իրենց հոգեւոր արօրն ու մանգաղը պահ մի մէկդի թողով , իրենց մօրը սուրբ Եկեղեցւոյ փրկութեան թշնամեայք դէմ զինեցան , և փառաւոր յաղթանակներ ստացան . Հռոմայու ազգեցու թեան ջիւղ խորտակեցաւ և Հայոց եկեղեցւոյն անաբառութիւնը և ուղղափառութիւնը նոր փայլ մի առաւ , եւ յայտնի ցուցաւ առաջի աշխարհի :

Լյապէս ուրեմն լատուած ամեն ժամանակ որ օտար յարձակում մի հայ եկեղեցւոյ ուղղափառութեանը վնասերու կ'ըլլայ , ինքը միշտ պահպանած է՝ ըստ ժամանակին յարուցանելով աւոր որդւոյր մէջէն Գողթաթու դէմ Գաւիթներ և խարդողիմէսի դէմ Նշեցիներ ու Տաթեւացիներ : Արեւին ժամանակներս երբ կրօնի խնդիրը կրկին յուղուեցաւ ազգիս մէջ , յաբոյց լատուած Պողոս Պատրիարքը Լորի անապոյտեցին : Լսոր ժամանակ սուրբ Յակովբայ Լթոռին աղտաութեանը

համար , զոր Յոյնք ոտք ելած էին կրկին յախշտակելու , հռոմէական հայոց եւ բուն լուսաւորչական ուղղափառ Հայոց երեւելի Վարդայր միատեղ ու միասիրտ աշխատելով , երբ յաջողեցաւ իրենց ջանքը ու Լթոռը աղտաւելին , գեղեցիկ խորհուրդ մի իրենց միտքը յղացաւ , այսինքն կրօնի որոտճառապառակտեալ համազգի ու համարիւն եղբարքը հոգեւորապէս միաբանեցընել : Սոյն բարի խորհուրդը Պողոս Պատրիարքի խմացուցին , զոր ուրախութեամբ ընդունեց եւ գործադրութեանը ձեռք զարկաւ . բայց թէ ինչ պատճառաւ չյաջողեցաւ ու ետ մնաց այսպիսի ցանկալի ու երեւելի ձեռնարկութիւն մի , ինքը համառօտ իւր մէկ ատենաբանութեանը մէջ կը յայտնէ , զոր հոս մէջ պիտի բերեմք :

Մէկ քանի տարիէն ի վեր է հայ խարդողիմէսներ Հայաստանու որդւոյր մէջ ցրուելով , և նոր որսեր ընելու ակնկալութեամբ կրկին յուղմանք պատճառած են ազգին մէջ և նոր փեռեկառման միահայր և միամայր եղբարց և միապատկ սմուսնաց մէջ ձգած ի կործանումն ազգին . վասն որոյ և կրօնի խնդիրը դարձեալ ծագեցաւ , և իւրաքանչիւր կողմ՝ լրագիրներն իրենց բերան ընելով , որոնք թարգման կը համարին հասարակաց զգացմանցը , և երբեմն ալ մասնաւոր տետրակներով սկսաւ պաշտարանել իւր առանձին եկեղեցին : Լյապիսի ժամանակի մէջ , յորում բոլորովին զուրկ կը գտնուի Հայ ազգը Գօրաբաբէլի նման գործօն ու անձնանուէր առաջնորդէ , փափաքելի էր հանգուցեալ Պողոս Պատրիարքի ոչ թէ գրաւոր ատենախօսութիւնը մոխի ընել , այլ իւր կենդանի բարբառը լսել , անոր պատկառելի վեհ կերպարանքը առաջի աչաց ունենալ , և ազգային ազգեցութիւնը զօրացընել



Թէ՛ օտար ազգաց եւ Թէ՛ ի՛նչ Գրան  
քով։ Այսպիսի ներկայացուցչի մի կա-  
րօտ է միշտ ազգը։ Բայց հիմա կուհի  
միջ շատանամք գտնէ՛ անոր խօսքերը  
մոտիկ ընկելով, որ երբեմն մայր Նիկեղե-  
ցւոյ պատերը հնչեցուցին, երանի Թէ՛  
հիմա՛կ այլ թմրեալ ու ազգային բղ-  
ղայմունքէ սառած սրտերու թեւերը  
թրթրացնէին։ Յիշեալ ատենաբա-  
նու թիւնը՝ դոր խօսեցած է ի 12 փետ-  
րուարի 1867 ի յայր եկեղեցւոյ սուրբ  
Աստուածածնի, ի գիր անցրնելով մեզ  
կ'աւանդէ ունինդիրներէն մէկը՝ այն  
է՛ Նիկալսեան տիրացու Աղիսէ ա-  
նուն։

«Աննասուրբ Արարիգութեան շը-  
նորհքն ինչէ՛ ի միտս մեր առ ի խօսել  
զուղիղն, և յսկանջս ձեր առ ի լսել։

«Մեր պայօրումն ձեզ խօսելիքը  
ուրիշ բան չէ, այլ միայն Աստուծոյ  
փառացը, Նիկեղեցւոյ պայծառութեա-  
նը և ազգիս խաղաղութեանը համար,  
և այս երեք բանը մէկ խօսք բսել է.  
փառն զի Նիկեղեցւոյ պայծառութիւնն  
ալ՝ Աստուծոյ փառք է։ Այս ասոնցմէ  
դուրս ուրիշ բան զրուցելու նպատակ  
չունինք. ահա սուրբ Սեղանը և Հո-  
գին սուրբ աստ է. չունինք նէֆալիէի  
կամ կռիւ, և կամ այլ ինչ, այլ մի մի-  
այն մեր ջանքը ազգիս խաղաղութեա-  
նը և սիրոյն՝ և ատելութիւնը վերցը-  
նելու համար է Դ։

(Այն յառաջաբանական խօսքը ընդ-  
միջելով կը հարցնէ՛ Չամչեան Յով-  
սէփ աղային՝ որ հան ներկայ էր, Թէ  
արդեօք Հայերէն խօսի՛ Թէ՛ Տաճկե-  
րէն. նա ալ պատասխանելով՝ Թէ  
պարզ Տաճկերէն խօսիլը աւելի յար-  
մար է, սկըսաւ նոյն լեզուով ատենա-  
բանել՝ որպէս զի բոլոր Ժողովուրդը  
հասկընայ)։

«Ճիւմէնիդէ մարիւմ տիր քի, Վր-  
մէնիտն միլլէթինտէ պիր աճայիպ հալ  
կէօրիւնիւյօր պէշ իւզ սէնէտէն պէրի  
տիր, նէ՛ աճայիպ շէյ, աճէպ հիքմէթ  
նէ՛ տիր — պիլմէմ։ Պա. ազձէ գալլ-  
կաար՝ եախօտ պիր ախէր գալկա տէ-  
յիլ. դիրա պազայօրում քի՛ պիրպիրի  
նիլ իլէ ագսուսթա էտիյօրսունուզ,  
վէ մուհապէթիմիդտէ հիլ պիր գու-  
սուր եօդ, վէ խարմիրդնիլ տախի վար.  
անձագ տին պահարնա կէրօիրտէ.  
պիրիպիրինիլէ խօր նաղար իլէ պազա-  
յօրսունուզ. աննատըք քի պու գալկա  
ճիւմանի տէկիլ իմիշ, իլլա՛ բուհանի.  
Աճէպ պունուն սէպէպի նէ՛ տիր, վէ  
նէտէն իգթիլա էտէյօր. պիր աւա-  
զանտան Սկրասութիւն ալմըշդ, պիր  
փէտէր վէ պիր վալտէ էվլատըյդ.  
Անիտէ պէնիտէ կռապաշտութիւն  
տան չոգարըպ ուղլափառ հաւատքա  
կէթիրէն սուրբ Ասաւորիշ հայրը-  
մըդ տր։ Սուրբ Ասաւորիի ինքեար  
էտէ պիլլիքիլ. պիր աստէմ փէտէ-  
րինի նաարէ ինքեար էտէ պիլլի. մէմ-  
լէքէթինտէն չոգըպ ախէր եէրէ կի-  
տէր, զէնահաթընը, ատընը, քիալէ-  
թինի տէյիշտիրէ պիլլի, լաքին փէտէ-  
րինի վալտէսինի տէյիշտիրէմէզ, զի-  
րա միւմքին տէյիլ։ Պիլտէ պիր փէ-  
տէրին վէ պիր վալտէնին էվլատըյդ.  
Ասաւորիշ հայրմըզ նէ հաւատք  
էօյրէթտի իտէ, օ կիւնտէն պու կիւնէ  
գատար հիլ շաշմայտրապ թութայօ-  
րուզ. պու աղիլ նէ՛ տին պիլլէ էօյ-  
րէթտի իտէ, թութայլմ մը, եախօտ  
պիր պաշկա տին մի աւայալմ։

Կերչի էֆէնտիմիլ Յիսուս տիւն  
ետտէ իքէն՝ պիլլիմ Հայ միլլէթինտէն  
Արգար թագաւոր կէօրմէտէն ինան  
տը Յիսուսա. վէ քեաղտ եաղտը,  
տալէթ էթտի կէլին քէնտի էմրա  
զնը տէֆ էթսին տէյաւ։ Յիսուս է-  
ֆէնտիմիդտէ ձէվապ կաղըպ՝ վագարմ



տօյմուշ տուր տեաի, սօնդրա Առաքեալարբմտան կեօնտէրիրմ էմուս, զընը տէֆ էտէր: Պու տա պիպէ պիր շան տէյիլ մի բի՝ Հայոց փատիշահօր օլտուն իփատիտարի կէօրմէտէն ինանան փատիշահօրտա: Սօնդրա փադէտա առաքեալ կէլիպ՝ Հայոց ազգը լուսաւորել էթաի, վէ իւրգողիմէտ վէ ապրը առաքեալարտան կէլիպ օլտաւորլար, լարին տիգիլ թութաւորամաւորլար, զիրա Արգարտան սօնդրա բըրիտոնէսէթիւնը գայրալ էթաիլէր, վէ տէօնիւպ փութփէրէսթիւքտէ գալտորլար՝ թա Տրդատ թադաւորտաք, բի սուրբ Առաւարիչիմիլ օլվադթ տա Վայսէրիտէ իլիմ վէ բրիտոնէսէ կան ուղղափառ հաւատքը էօյրէնտի, բի օ վադթ սէնլիք պէնլիք եօղ խոի բրիտոնէսէլարտա, կէրչի պէօյլէ միլէթլէր վար խոի, լարին հէփտի պիր ի տիլէր հաւատք իլէ:

Սօնդրա Առաւարիչիմիլ կէլոի Հայաստանա, վէ սուրբ Հաւատքը տննաթաք իտէ, Տրդատ վէ էհալի հէփայրալլարլար բի՝ բէնաիլէրինին եօլունտան այրըմը տըս տէյի: Ալ է չօգ զիյաւտէ էգապ վէրտիլքտէն սօնդրա՝ խորվիրապա պրագտըլար, օն իւլ սէնէ միգտարի օրատա վէհիլի երանլար վէ չամուր իլինտէ գալար, բի սէն պէն իւլ կիւն տաւրամօյրլ: Սօնդրա պագնէ օլտու, օ այրալլայան փատիշահ խոր վիրտպտան չգարթորըրալ սյադընա տիւշտիւ վէ շիֆա պուլուպ՝ տօղրու իմանա կէլոի:

Պու սուրբ Առաւարիչ փէտէրիւ միլին էլի իլէ Հայոց ազգըմը լուսաւորել օլտու, վէ պու սուրբ Հաւատքըմըմը էօյրէթաի պիլէ: Պուսու տա խի ֆէհմ էտին բի՝ Առաւարիչ իամի նի զէվք սէֆա իլէ, եէմէք, իմէք, կէլինմէք, գուշանմաք իլէ էտինմէտի, իլա տէհէթլիւ իսկէնծէլէր իլէ: Ալ

կէր սուրբ օլմաք գօյալ օլալ լար, սուրբ Ալեղեցիմիլ տահա չօգ տտէմէր տօնէլ էտէր խոի: Ալմէլէ սուրբ լարը էլէյէ գօյալ էլէլին, Առաւարիչէ մէնէնտ պիր տահա պուլա պիլիլ միտինիլ: Տէմէմ սուրբ Ատուածաժինի, բի յատկացեալ սուրբ սուր, տէմէմ Յովհաննէս Սկրիչի վէ առաքեալլար, բի Աֆէնտիմիլ իլէ օթաւրալ գալլարլար, եա Հայրապետէր իլինտէ տէմէք իտէրիմ: Վապիլ բի պէնիմ փէտէրիմ օլտուզու սէպէսի իլէ՝ մէթ էթաիլիմտէ եարանտա գաթարմ, լարին Յովհան Սկեբերան բի՝ Ատրի միլէթիտէն՝ վէ Մուլ փաթրիլի խոի, օնուն էթաիլի մէթլէր վէ վէրտիլի շահատէթլիք տահա զիտէ մագպուլ տուր:

Իմոի պէօյլէ ազիլ փէտէրիմիլ վար իբէն, պրագալ տա գայրը փէտէր միտրայալմ, պու ազիլին էօյրէթալի հաւատքը պրագալտա՝ պաշիտ հաւատքա՝ մը սիւլաք էտէլմ: Սուրբ Առաւարիչին էօյրէթալիլնտէն նէ՞ շաշմը տըր Հայոց էկեղեցի բի՝ ուղղափառ տէյիլ տէի ֆառ օլունույր:

Ելմոի պիլտէ տիւշիւնտիւք բի՝ միլէթի Արմէնիան Փաթրիլի նապ օլտու՝ իտէ՝ կէրէք լարգ, վէ կէրէք նալարգ, էկէր նալարգ իտէմ՝ սիլէ պատիժ օլմուշ օլուրու՝ Ալահտան, նիծէ բի Սաւուղու փատիշահ էթաի խրայէլ միլէթինէ պատիժ տէի, եօգ էկէր լարգ իտէմ, սիլին հագգըրդա խայրըլ օլմուշ օլուր, զիրա Ալահարգ պիր շէյ օլմալ: Պօրծլուլու՝ շիմոի գալ երլ, վէ գալ ալ Պատրիաք իտէմ, արամայա, զիրա՝ Ալահ պէնտէն արար Հայոց ազգըն ճէվապընը, նաորը բի Աղեկիլէ մարգարէ է տէաի, «Արդի մարդայ, գէա կայալցի զբէզ ի վէրայ տանն խրայէլի»:

Աիլ տէ տայրէ վէ չօլուգ չօճուգ



տահալի սինիւղ, Ալլահ պատըըչաւարն, վէ հէր պիր էվին պիրեր պէօյիւղիւ վար. օ էվին պէօյիւղէրի քէնտի էվէրօնին խտարէսինէ պազմայաւ մը. պիր էքսիքըք կէօրիւրէր իտէ էվէրօն տէ պէ տէխմար, նէմէ լազըմ տէր մի. Հէլալէթ էվին պէօյիւղիւ էվին խտարէսինէ մէմուր իտէ, էվինի խտարէ էտէճէք տիր: Ա է նաւը կէմիճի օլա պիրի օ. քի ֆուրթուհայա օղըսըր պէ միսինի սէլամէթէ չըգարմայա ճահտ էթմէսին. պէ նէմէ լազըմ, պաթար. տա պաթարն տէսին. Պէն նիճէ Հայոց ազգըն խտարէսինէ վէ սէլամէթինէ պիրպայա տուրուպ պազմայալըմ:

Պազարպիրը քի տիւնեատա փա տիշահար վար, վիւզէրարար, զապիթէր վէ վիւճուհար վար. պուհար ճէմի խտարէ իշին տիր, վէ հէր միլէթէրին տախի պէօյիւղէրի վար, վէ թարղ թարղ ուղանցար (տուրուլէթիւնը) վար: Քէզալիք Հայոց ազգընտա Աթաթուղիկտա վար, Պատրիարքար վար, Առաջնորդար վար, եւ այլն:

Հիմարի սիգտէ Պատրիարք պուլունտուպ, պու ճիհէթտէն պօրճուլ օլտուպ պու պիրիւմ Հայոց ազգըն իտարէսինէ պազմայա: Ակէր պէն նէմէ լազըմ տէր իտէմ, իւչ շէյիմ օլմալ տրը. եա տինիմտէ նօգասնիթ, եա մանտուպու մոտն գօրգու, վէ եախտ թարաֆը հաթըր էթմէլիւմ: Պէլի, չօգ կիւնահքարում, լաքին պու իւչ շէյտէն պիրիտէ եօգ պէնտէ: Պէն Պատրիարք օլալ տահա իքի երլ տրը. էվէլի կէչինէմէյօրուտում. վէ հալա նէրէյէ կիթտէմ Հայոց ազգըն սայէսին տէ կինէ կէչինէ պիրիւրիւմ. նէ հաճէթ, սիգտէ մալիւմ տիւր: Պիրիտինիլ պէն տարնտան նէ հըզմէթտէ խոլիւմ, վէ ճիւմէնիլ իլէ հուգուգու մուգ վար լար, քի կինէ վար տրը:

(Օ) Ը վազիթտէ նէ սիգէ նէ հէր հանկը Ակէզէյիմիլտէ քարալ վէրտի իմտէ տարա պու միսիւլիւ սէօհպէթ էթմէմիշիւմ, նիշին քի օլ վազիթ սէլա հիէթիւմ եօրու տու, սնճալ օլ վազիթն Պատրիարքընա բաճի խոլի: Հիմարի պա նա ֆարղ տրը լապիթ պազմայա արամայ քէնտի միլէթիւմի. զերա կէրէք Ալլահըն քէլամի իլէ, կէրէք շէֆէթիւմ Ա. ֆէնտիմիլին հաթար շէրիֆի իլէ Պատրիարք օլմուշուտա, Արմէնի միլէթի նին ճէվապըն պէնտէն իսթէրէր. պէն նիճէ ֆէնտա տտէմ օլմալ յըմ. քի, պէ տէլիմարի նէմէ լազըմ տէյէլիւմ. զիւլ ֆիւեարէ տօղուհմայըմ տա, զէվիթի սէֆալը էտէլիւմ, տմնի միլէթ խալապ օլուրումուշ, օլտուն: Տէյիլ մի քի հէմ պու տիւնեատէ, հէմ ահրէթտէ սիգին իշիւն ճէվապ վէրէ ճէկիւմ. սիգին իշիւն իքի ճիհանտէ թէքալի մի օլա յըմ. բէվա մը տրը. օնտն իշիւն հէր թիւրիւսիտէ էօլիւմիւմէտէր կէ օլիւմէ ալմըշըմ, պարի պու էօմիլի հայաթտէ թէքալի օլուրտամ, էօթէտէ իւճրէթիւմի ալտըմ:

Պազըլար տէրլէր իմիշ քի, իքի իւչ քէսանտ ուշմուշ տա՝ պու մաղահա թա միւսալիլէթ էալյօր. կէրլի ուշմուշում, լաքին Ալլահըն արդարու թիւնուհա ուշմուշում:

Ի յաշըրէ:

Պիլեսա յաթնասորբ իշան  
Էսաթաթիւն (1):

Գովետ բերկրանայ հըրմուգալիան հնճանի,  
Քիզ կոյա Տիրամար քաղցրաճայնեալ երգեր:  
Ով կուսից պարմանք, մայր Հայրամին որդւոյն.  
Անճին ծընողին՝ Բանին ծընող մարմնով:

(1) Սոյն գեղեցիկ հօդանուագ երգը, որուն յօրինողին անունը մեր քաջն էղած Վանճ գիրքերուն մէջ չկայ յիշատակում, կ'երևի որ կամ Շնորհալոյն եւ կամ աւելի հաւանօքէն Գրիգորի Նաբեկացւոյն է:



Վերի բրգերէն հույ մարտան վարուք .  
 Աթառ անկն անտանկ լուայն .  
 Եղեմ շնչանն անտան արնկն տեղի .  
 Վարդ դարարեր Զօր ծոցանն ծագիկ :  
 Արանէն հրաշխք ծառ երկնուդէ ծագիկալ :  
 Մանահ խնծարոյն անուշահտ սղաղոյն :  
 Տեղի յորինանն դու մարգարտն լուայ :  
 Ոսկի մարտախլ ի հոգանիւթ զարմե :  
 Ի յերկրամընտց հարանի յերկինքս երալ (1) .  
 Մայր կաթնամատոց Զօր միտմին բանին :  
 Սուրբ կոյս Մարիամ մօրն Եւայի բծիչ :  
 Նախնայն Ագանց ազատարար ծնունդ :  
 Ընդ յօղոյն կենաց Զօրն լուայ իջեալ :  
 Անդ անծեւանին ծարաւեղոս յարուան :  
 Ի խճեալ բնութենէս տաղ լուայ ծագեալ :  
 Խորին գիշերոյ քաղցրանը շղ փայլմամբ :  
 Բարունայն վերնայ բնաւին արարողին :  
 Խորոյն բանաւոր եւ լուսակիր տաճար :  
 Բոլորանակ բերող զուրախարար ողկոյն :  
 Բրոյ զմայրեցաք յանմահական բաժան :  
 Կենաց տաղանակ , աստուածագիծ տախտակ :  
 Լեւոն աշնանունակ աշխարհալիր վիմին :  
 Բոկեղէն տափոր մանանային կենաց :  
 Գաւազան ծագիկալ ի յարմատոյն Եկեղեցոյ :  
 Երկրամին սեւից գերադանց երկնից :  
 Ի վերին զօրացն օրհնարանեալ միշտ Արար :  
 Սուրբ Զօրայն հրոյ տառուածնեալ բուրմառ :  
 Տափ անայ իջնից տիեզերաց բուրեալ :  
 Նորահրաշ շուշան վերաբուսեալ ի փշոց :  
 Քաղցրահամ ճաշակ , բուրանն անուշահտ :  
 Մայր կենարարին հաճոյական կանաց :  
 Հայցմամբ պաղատեա տա ծնեայն ի քէն Աստուած :  
 Արեամբ փրկելոցս քո Միածնի հօտիս  
 Լեր միշտ բարեխոս ողորմանին ծընող :  
 Բառէ ըղջրուեալուն եւ զվարտեալս մեղք :  
 Զօրս եւ ժողովեաց խաչատարած բաղրան :  
 Ի քահանայից պետականէն լուայ  
 Մեր Հայրապետին հաստատութիւն հայցեալ :  
 Արքային անմահ արքայուհի եւ մայր :  
 Զմեր պատկաւորն միշտ յաղթող արար :  
 Միշտ զեկեղեցիս Հայաստանեայց աղօթիս  
 Ամբիժ եւ ուղիղ դաւանութեամբ պահեալ :  
 Ի բրակի լուայն , աստուածութեան միւսմ  
 Գոհութիւն եւ փառք յաւիտեանս , ամէն :

(1) Ա.Ն. օգիւթ Էրեր :

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Տանն և հինգ օրէն ի վեր է խաղ  
 մի կը պարտի հասարակութեան մէջ ,  
 և հեռագիրներն ալ , ըստ ոմանց , նոյնը  
 կը վիայեն , թէ քաղաքիս Ալեք . կա  
 ռավարիչ Իզգէթ փաշայն պաշտօնէ ին  
 կած , և իւր տեղը Ալեք . Այսպիսի փա  
 շայն յաջորդ սրտուած է : Կ'ըսուի նա  
 և՛ թէ Իզգէթ փաշայի բնթացիցը վե  
 րաց գանգաւանէր ըլլալով՝ դատի տակ  
 է , եւ այլն : Անր գիտաւորութիւնը  
 զինքը ոչ պաշտպանել է և ոչ ամբաւ  
 տանել ըստ իմիք , այլ մեր ցաւն այն  
 է , որ յիշեալ փաշայի ժամանակ ծա  
 դած մէկ խնդիրը առանց լուծուելու  
 մնաց , զոր կը յուսայինք որ ուշ կամ  
 շուտ՝ օր մի պիտի բարեհաճի՝ արդու  
 րութեամբ կարգի գնել զայն՝ յարգե  
 լով միանգամայն ի . Կ'ըսն հրամանը  
 զոր խրկած էր իրեն՝ իրաւունքն ի գործ  
 գնելու : Բայց խնդիրս է սուրբ Վրկ  
 չի գերեզմանատան վէճը , որում պատ  
 ճառ տուին Աստիք մեր գերեզմա  
 նատան մէջ երկու դուռ բանալով ,  
 մինչդեռ արքունի փողոցին կողմէն բա  
 նալու տեղ ունէին և արգարութիւնն  
 ալ այնպէս կը պահանջէր : Ղիշտ սա  
 րի մի եղաւ այս դէպքը պատահելը ,  
 Արքաղան Զօր կրկին կրկին տուած բռ  
 ղորագիրերը ամենեւին արգիւնք մի  
 չունեցան , և ոչ դպրն ազգեցութիւն  
 ըրին , վասն որոյ իրաւունքը կուտայ մեզ  
 ըսելու թէ՛ իրաւունքը զօրաւորինն է  
 միշտ : Տերութեան մի պաշտօնեաները  
 որքան որ կը պարտաւորին օտար տե  
 րութեանց պաշտօնէից հեռ քաղաքա  
 կանօրէն վարուիլ , նոյնչափ ալ կը պար  
 տաւորին առանց աշտուութիւն ընելու  
 անոնց՝ իրենց տերութեան հաւատա  
 րիմ հպատակաց իրաւունքն ալ պաշտ  
 պանել , և ոչ թէ օտարի մի անիրաւու  
 թեան զոհ ընել զայն :



Յոյս ունիմք ( և յոյսէն ի զատ ուրիշ ինչ մնացեր է Հոյսց Գանդորային տիփին տակը ), որ Վսեմախալ Նաղիֆ Փաշայն իւր նախորդին ի կախ թողուցած ամենակարեւոր խնդիրը ի գործ պիտի գնէ արդարութիւնն ու իրաւունքը միայն սուաշնորդ ունենալով իրեն :

— Ըմոյս 22 ին Վսեմ Նաղիֆ Փաշայն որ Գամասկոս կը գտնուէր Յուպէ ելնելով՝ 25 ին հասաւ ի սուրբ Վաղարս սովորական հանդիսիւ :

— Նաղիֆ մէջ հնախուզական նոր ընկերութիւն մի հաստատուած է, ուր յնարատակն է հին Նշուտայէմի բուն գիրքը և անոր հին պարիսպները գրունել և ուրիշ հնութիւններ յայտնել : Ըյս նարատակաւ մօտերս քանի մի ճարտարագէտ և հնագէտ մարդիկ նկած են հոս յիշեալ ընկերութեան կողմէն, և արդէն սկսան քանի մի փորձեր ընել : Ննցեայները Գամասկոսի ըսուած գոնէն գուրս, որ քաղաքիս հիւսիսակողմը կ'իյնի, տեղ մի փորեցին, ուր թէպէտ և հնութեան նշաններ և շէնքերու մնացորդներ գտան, բայց իրենց խնդրածը չըլլալուն, թողուցին : Արժաւարէիք որ այս կողմն շարունակէին իրենց աշխատութիւնը ու փորձերը, ուր թերեւս երեւան ելլէր մեր Արգարու կնոջ՝ Հեղինէ բարեպաշտ թաղուհւոյն դամբանը, որ ըստ Յովնէպոսի քաղաքիս հիւսիսակողմն է, և որուն զարմանալի և արուեստաւոր շէնքը Բաւսանիաս Յոյն սրտամաշիրը կ'ըստորագրէ իւր Արիադեան ըսուած գրքին մէջ : Կտրենային եւս Յովնէպոսէն առնելով կը յիշատակէ անոր շիրիմը, և կ'ըսէ՝ թէ մինչեւ իւր օրը գեռ կը կենար այն ( Բ. 35 ), որով կ'իմանամք թէ Տիտոս քաղաքն ու տաճարը կործանած ժամանակ, խնայեց անոր : Արդի եւրոպացի

ճանապարհորդք իրենց մասնաւոր տեղագրական ցուցակին մէջ կը նշանեն նոյն շիրիմն տեղը, բայց անոր ճիշտ տեղը ուր ըլլալը գեռ յոյսնի չէ մեզ, վասն որոյ դիպումաձը միայն կրնայ յերեւան հասնել և Նշուտայական աշխարհիս մէջ Հայկական հնութիւն մի գուրս տալ :

Յիշեալ ընկերութեան վերայ աւելի ընդարձակ տեղեկութիւններ տալու յոյս ունիմք :

— Ար արդոյ ընթերցողաց շատերուն ծանօթ է, որ ասկէ իբր երեք կամ չորս տարի առաջ Խարբերգու կողմերը երբ որ սաստիկ սով մի կը տիրէր, յանկարծ խեղճ գեղացին ու սովաբեկ աղքատը երկնապարգեւ հաց մի գտաւ իրեն, և անով իւր կեանքը պահպանեց :

Արդատմեն տեղացիք, թէ օր մի հովիւն իւր ոչխարները արծած ժամանակ կը տեսնէ որ անասունները սորի մի մօտ երթալով եւ իրարու վերայ խռնելով՝ գլխոյն գէպ ի գետին կ'արածուին : Ար մօտենայ և կը տեսնէ չոր թթի նման նիւթ մի, զոր ախորժանօք կ'ուտէին ոչխարները : Հովիւն անկէ հեռն առած մէկին մէկալին ցոյց կուտայ. քաղցեալ գեղացին ի հարկէ ըստիպեալ փորձ մի կ'ընէ, և ժողովելով մանանայէն, ինչպէս կ'անուանեն տեղացիք, կ'աղայ, և ալիւրը թրելով և փռան մէջ եփելով պատուական եւ համեղ հաց մի կը գտնէ : Քիչ օրէն այս հացս առ հասարակ բոլոր աղքատաց սեղանը կը զարդարէ, եւ սոված տանջ մարդիկութիւնը մահուան եւ նեղութեան փոանդէ կ'աղատէ : Հետագայ տարին նոյն հացէն ուխտաւորը հոս բերած էին հեռեւնին, ուսկէ Մենապատիւ Սրբազան Հայրը Ս. Լ. Թոռոյս թանգարանին վերասեւջութիւն ըրած ժամանակ մաս մի առ



ներալ պահած էր : Բայց փափաքելով բռն խոյ նիւթը իւր տեսակոյն ձեռք բերելու , յատկապէս խնդրած էր խոր բերդցի Սուգողու Յարութիւն աղայէն , որ այս տարի Հիւսէնիկցի Տէր Յովհաննէսեան մահտեսի Գէորգ սերելւոյ հետ խրկեց : Ըմեն . Սրբազան Հայրը յատուկ շիշի մէջ դնելով եւ բերանը կնքելով դրաւ ի թանգարանը ի ցոյց ասարգային : Յիշեալ նիւթը , ինչպէս լափնք , ձերմակ չոր թթի նմանաւ թիւն ունի , եւ կամ անկի նման ամենամանր դնտակներէ բաղկացեալ մարմին մի է , դոյնը դեղին : Ըսիրայ նոյն խորբերդու կողմերը ուրիշ սովոր տարիներ եւս տեղացած են . եւ այս անգամ ըստ մեծի մասին Շէտիտէր եւ սուրբ Սարգիս ըսուած սարերուն վերայ իջեր են :

— Եղեալ շարթու քաղաքիս մանչ տղայոց քննութիւնը սկսուելով տասն եւ հինգ օր շարունակ տեւեց , որոնք հետ զհետէ քննեցան Հայերէն , քրտիանութեան , ճարտասանութեան , տրամադրանութեան , թուաբանութեան , ազգային պատմութեան , բնական տշխարհագրութեան , եւ Գաղղիներէն , Երասկերէն եւ Տաճկերէն ուսմանց մէջ : Եկող կիրակի օր եւս Պարզեւաբաշխութեան հանդէսը պիտի կատարուի :

— Երկրայ ամսոյս մէջ յառանգաւորայ դպրոցին աշակերտելու համար վեց տղայք եւս եկան , որք են .

Սարգիս Պողոտեան Էդրիանուպօլսեցի :

Թադւար մահտեսի Գրիգորեան Էդրիանուպօլսեցի :

Կարապետ թովմասեան Չանապղայեցի :

Յարութիւն Յակոբեան թալատցի :  
Կարապետ Ըջգեան "

Սեւքան Սանուկեան Վանցի :  
որոնք ըստ սովորութեան Ս . Ըթուոյս բժշկին ներկայացընելով զիրենք , եւ իւրեան տուած վիշտագրին համեմատընդունուելով ամենքն ալ , յանձնուեցան Գպրոցի Ըրժանատրասիւ Տեղին , եւ անմիջապէս իրենց ուսման ոտախճաններուն համեմատ դատարանները ընդունուեցան :

— Սրբոյ Ըթուոյս թանգարանի Տեղութիւնը կը փութայ Սիօնի միջոցաւ իւր շնորհապարտ զգացմունքները յայտնելու Պէշիկթաշու Հայկազնեան Բնիկութեան , որ ազգաւ սիրաբար կը բարեհաճի իւր ամեն տղակալ գրքերէն մէկ մէկ օրինակ նուիրելու թանգարանիս :

## ՆՈՒՆՈՒՅՈՒՄՆ

ՆՈՐ ՀՐԸՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԲ

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ

ԵՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԸՑ

ՅՈՐՆԵՑ

ԽՈՐԷՆ Վ. ՎԱՆԵՅԻ ՄԻԹԱՐԵԱՆ

Ի ՄԷԼԱՆՈՒԹԵՆԷ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԱՆՑ ՈՒԿՏԻՍ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԱԻ

ԱԳՈԹԱԳԻՐԲ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԸՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԲ

ՅՈՐՆԵՑ

ԿԱՐԱՊԵՑ Յ. ԵԱԶԸՃԵԱՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԱԻ